ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ

ք. Երևան 01.10.2021թ.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ
ՀՀ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁԻ
թիվ ԳԲՔԱ-LO-2021/72

Նախագահությամբ՝ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձ Լ. Օհանյանի
Քարտուղարությամբ՝ Ռ. Մկրտչյանի

Պատվիրատու՝ «Հայկական ատոմային էլեկտրակայան» ՓԲԸ
Բողոք բերող՝ «Քլինինգ Հաուս» ՍՊԸ

Մասնակցությամբ՝
«Քլինինգ Հաուս» ՍՊԸ-ի ներկայացուցիչ՝ Ա. Պարանյանի,

Գնման ընթացակարգի ծածկագիրը և առարկան՝
«ՀԱԷԿ-ԲՄԱՊՁԲ-16/21» ծածկագրով բաց մրցույթ, Հայկական ԱԷԿ-ի թիվ 2 էներգաբլոկի ռեակտորային բաժանմունքի պատասխանատու սպառիչների հովացման համակարգերի (ՊՍՀՀ) I և II անցուղիների համար խողովակաշարերի և փականների ձեռքբերում

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձը (այսուհետ նաև՝ Բողոքներ քննող անձ), քննության առնելով «Քլինինգ Հաուս» ՍՊԸ-ի (այսուհետ նաև՝ Ընկերություն) կողմից 06.09.2021թ.-ին ներկայացրած բողոքը (այսուհետ նաև՝ Բողոք) և կից փաստաթղթերը,

ՊԱՐԶԵՑ

1. Գործի նախապատմությունը.

Դիմելով ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձին՝ Ընկերությունը ներկայացրած բողոքով խնդրել է պարտավորեցնել «ՀԱԷԿ» ՓԲԸ-ի կարիքների համար հայտարարված «ՀԱԷԿ-ԲՄԱՊՁԲ- 16/21» ծածկագրով բաց մրցույթի գնահատող հանձնաժողովին՝ Հրավերի 1-ին չափաբաժնի տեխնիկական բնութագրում կատարել փոփոխություն:

Բողոքներ քննող անձին (Գ. Ներսիսյանին) բողոքը մակագրվել է 01.09.2021թ.-ին:

Բողոքներ քննող անձի (Գ. Ներսիսյանի) 03.09.2021թ.-ի թիվ /ԲՔԱ-ԳՆ/2/14263-2021 գրությամբ բողոքը վերադարձվել է բողոքում արձանագրված թերությունը վերացնելու համար:

Ընկերությունը 06.09.2021թ.-ին ներկայացրել է բողոքի շտկված տարբերակը, որը նույն օրը մակագրվել է ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձ Լ. Օհանյանին:

07.09.2021թ.-ին www.gnumner.am կայքում հրապարակված հայտարարությամբ բողոքը ընդունվել է վարույթ, տրվել է թիվ ԳԲՔԱ-ԼՕ-2021/72 համարի ծածկագիրը:

15.09.2021թ.-ին և 01.10.2021թ.-ին նշանակվել և հրավիրվել են նիստեր:

Գործի քննությունն ավարտվել է 15.09.2021թ.-ին և Բողոքներ քննող անձի որոշման հրապարակման օր է նշանակվել 01.10.2021թ.-ին:

2. «Քլինինգ Հաուս» ՍՊԸ-ի ներկայացրած փաստերը, հիմնավորումները և պահանջը.

«Քլինինգ Հաուս» ՍՊԸ-ն 06.09.2021թ.-ին ներկայացրած բողոքով հայտնել է հետևյալը.

««ՀԱԷԿ» ՓԲԸ-ի կարիքների համար հայտարարվել է «ՀԱԷԿ-ԲՄԱՊՁԲ-16/21» ծածկագրով բաց մրցույթ (այսուհետ նաև՝Ընթացակարգ):

Սույն Ընթացակարգին Հրավերի տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցի 1-ին չափաբաժնի մասով նախատեսվել է 4.4 ենթաբաժնի լրակազմությանը ներկայացվող պահանջներով սահմանված հետևյալ կետերը՝

Համաձայն ՀՊ-031-01 սեյսմակայուն պահանջներ.

Սեյսմակայունությունը պետք է հաստատվի ՌԴ NP-031-01 «Սեյսմակայուն ատոմակայանների նախագծման չափորոշիչներ» պահանջներին համապատասխան, և համապատասխանաբար միջազգային ընդունված ՄԷԿ, ISO ստանդարտների:

Ցանկություն ունենալով մասնակցել վերը նշված մրցույթի 1-ին չափաբաժնին՝ հարցումներ ենք կատարել տարբեր գործարանների, որոնցից ստացել ենք պատասխան, որ տվյալ խողովակները արտադրվում է միայն մեկ արտադրող ընկերություն:

Վերը նշված հանգամանքը հիմք ընդունելով պարզաբանում ենք խնդրել ՀԱԷԿ-ից, որի վերաբերյալ ստացել ենք պատասխան, որ խողովակաշարերի մասեր արտադրող գործարանը պետք է կատարի ԳOUS/OUS/ՏՈՒ տիպի պահանջները:

ՀՀ Սահմանադրության 86-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի համաձայն՝ տնտեսական, սոցիալական և մշակութային ոլորտներում պետության քաղաքականության հիմնական նպատակներն են գործարար միջավայրի բարելավումը և ձեռնարկատիրության խթանումը:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (հետայսու նաև՝ Օրենք) 3-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ գնումների գործընթացը հիմնվում է հետևյալ սկզբունքների վրա.

1) գնման գործընթացի միասնական կանոններով մրցակցային, թափանցիկ, համաչափ, հրապարակային և ոչ խտրական հիմունքներով կազմակերպում.

2) պայմանագրի կնքման նպատակով մասնակիցների շրջանակի ընդլայնում և նրանց միջև մրցակցության խրախուսում.

3) ցանկացած անձի համար, անկախ նրա օտարերկրյա ֆիզիկական անձ, կազմակերպություն կամ քաղաքացիություն չունեցող անձ լինելու հանգամանքից, գնման գործընթացին մասնակցելու իրավահավասարություն:

Օրենքի 7-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ ցանկացած անձ, անկախ նրա օտարերկրյա ֆիզիկական անձ, կազմակերպություն կամ քաղաքացիություն չունեցող անձ լինելու հանգամանքից, ունի գնման գործընթացին մասնակցելու հավասար իրավունք:

ՀՀ կառավարության 04.05.2017թ. թիվ 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի (այսուհետ նաև՝ Կարգ) 32-րդ կետի 1-ին ենթակետի «զ» պարբերության համաձայն՝ հրավերով նախատեսվում է նաև, որ մասնակիցը հայտով ներկայացնում է ապրանքների գնման դեպքում իր կողմից առաջարկվող ապրանքի տեխնիկական բնութագրերը, իսկ հրավերով նախատեսված դեպքերում նաև առաջարկվող ապրանքի ապրանքային նշանը, ֆիրմային անվանումը, մակնիշը և արտադրողի անվանումը (այսուհետ՝ ապրանքի ամբողջական նկարագիր):

Եվ այսպես.

«ՀԱԷԿ» ՓԲԸ-ի կարիքների համար հայտարարվել է «ՀԱԷԿ-ԲՄԱՊՁԲ-16/21» ծածկագրով բաց մրցույթ, որի 1-ին չափաբաժնի մասով նախատեսվել է 4.4 ենթաբաժնի լրակազմությանը ներկայացվող պահանջներով սահմանված հետևյալ կետերը՝

Համաձայն ՀՊ-031-01 սեյսմակայուն պահանջներ.

Սեյսմակայունությունը պետք է հաստատվի ՌԴ ՊՊ-031-01 «Սեյսմակայուն ատոմակայանների նախագծման չափորոշիչներ» պահանջներին համապատասխան, և համապատասխանաբար միջազգային ընդունված ՄԷԿ, ISO ստանդարտների:

Ցանկություն ունենալով մասնակցել վերը նշված մրցույթի 1-ին չափաբաժնին՝ հարցումներ ենք կատարել տարբեր գործարանների, որոնցից ստացել ենք պատասխան, որ տվյալ խողովակները արտադրվում է միայն մեկ արտադրող ընկերություն:

Խողովակների ձեռքբերման համար որևէ արտադրող ընկերություն, խողովակների համար չի տրամադրում սեյսմակայուն պահանջներ և հետևաբար Հրավերի տեխնիկական-բնութագրում այսպիսի պահանջի առկայությունը ստեղծում է արհեստական խոչընդոտ մասնակիցների քանակի ընդլայնման և ընդհանրապես մասնակցության հայտ ներկայացնելու համար:

Մասնավորապես Ընթացակարգի Հրավերի տեխնիկական-բնութագրում անհրաժեշտ է կատարել փոփոխություն, այն է՝ հանել վերը նշված չափաբաժնի համար սահմանված 4.4 ենթաբաժնի սեյսմակայուն պահանջները, քանի որ խողովակների համար այդպիսի պահանջի առկայությունը ոչ իրավաչափ է և չհիմնավորված:

Հետևաբար գտնում ենք, որ «ՀԱԷԿ» ՓԲԸ-ի կողմից հրավերը կազմելիս թույլ է տրվել գնումների մասին ՀՀ օրենսդրության մի շարք իրավապարտադիր նորմերի խախտումներ, որոնք իրենց հերթին հանգեցրել էր մասնակիցների շրջանակի ընդլայնման խոչընդոտի, քանի որ միայն մեկ ընկերություն է արտադրում այդպիսի պահանջով /սեյսմակայուն պահանջներ/ ապրանքատեսակ:

Ելնելով վերոգրյալից գնումների հետ կապված բողոքներ քննող անձին ենք ներկայացնում նաև արտադրող կազմակերպության կողմից տրված պատասխանի էլ. Փոստի հասցեից արված արտատպման պատճենը:»:

Հաշվի առնելով վերոգրյալը՝ Ընկերությունը Բողոքներ քննող անձին խնդրել է պարտավորեցնել «ՀԱԷԿ» ՓԲԸ-ի կարիքների համար հայտարարված «ՀԱԷԿ-ԲՄԱՊՁԲ-16/21» ծածկագրով բաց մրցույթի գնահատող հանձնաժողովին՝ Հրավերի 1-ին չափաբաժնի տեխնիկական բնութագրում կատարել փոփոխություն:

Ընկերությունը 14.09.2021թ.-ին ներկայացրած լրացմամբ հայտնել է հետևյալը.

«Հարգելի գնումների հետ կապված բողոքներ քննող անձ 06.09.2021թ. ներկայացված բողոքով խնդրել էինք՝

Պարտավորեցնել «ՀԱԷԿ» ՓԲԸ-ի կարիքների համար հայտարարված «ՀԱԷԿ-ԲՄԱՊՁԲ-16/21» ծածկագրով բաց մրցույթի գնահատող հանձնաժողովին՝ Հրավերի 1-ին չափաբաժնի տեխնիկական բնութագրում կատարել փոփոխություն:

Հաշվի առնելով, որ Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի կողմից տեղի է ունեցել հայտերի բացում և armeps համակարգի միջոցով այլևս հնարավոր չէ հրավերի 1-ին չափաբաժնում կատարել փոփոխություն, ուստի խնդրում եմ հիմք ընդունել ստորև ներկայացվող նոր բողոքի պահանջը, այն է՝

Պարտավորեցնել «ՀԱԷԿ» ՓԲԸ-ի կարիքների համար հայտարարված «ՀԱԷԿ-ԲՄԱՊՁԲ-16/21» ծածկագրով բաց մրցույթի գնահատող հանձնաժողովին՝չկայացած հայտարարել Ընթացակարգի 1-ին չափաբաժինը:»:

Ընկերության 25.09.2021թ.-ին ներկայացրած մեկ այլ լրացմամբ, վերջինս հայտնել է հետևյալը.

«Հարգելի գնումների հետ կապված բողոքներ քննող անձ, ի լրումն 06.09.2021թ. ներկայացված բողոքով բերված փաստերի և ի պատասխան «ՀԱԷԿ» ՓԲԸ-ի կողմից թիվ ԳԲՔԱ-ԼՕ-2021/72 ծածկագրով բողոքի վերաբերյալ ներկայացված դիրքորոշման, հայտնում ենք՝

մեր կողմից հարցում է կատարվել նաև ատոմային կայանների համար ապրանքներ արտադրող ամենախոշոր ընկերություններից մեկին՝ООО <<ТМК-ИНОКС>>-ին, որին ներկայացվել է Հայկական ԱԷԿ-ի թիվ 2 էներգաբլոկի ռեակտորային բաժանմունքի պատասխանատու սպառիչների հովացման համակարգերի (ՊՍՀՀ) I և II անցուղիների համար խողովակաշարերի ձեռքբերման նպատակով հայտարարված Ընթացակարգի Հրավերի տեխնիկական բնութագիրը, ԳՈՍՏԸ և բոլոր պահանջվող պահանջները, որին ի պատասխան ООО <<ТМК-ИНОКС>>-ն հայտնել է, որ տեխնիկական-բնութագրին համապատասխան՝ ներառյալ ԳՈՍՏ-ի ապրանքատեսակը հնարավոր է արտադրել և մատակարարել, սակայն առանց սեյսմակայունության պահանջի /կցվում է/:»:

3. <u>«Հայկական ատոմային էլեկտրակայան» ՓԲԸ-ի կողմից բողոքի վերաբերյալ ներկայացված փաստարկները, հիմնավորումները և դիրքորոշումը</u>.

Բողոքներ քննող անձը 07.09.2021թ.-ին թիվ /ԲՔԱ-ԼՕ/2/14426-2021 գրությամբ դիմել է «Հայկական ատոմային էլեկտրակայան» ՓԲԸ-ին (այսուհետ նաև՝ Պատվիրատու), հնարավորություն տալով «Քլինինգ Հաուս» ՍՊԸ-ի կողմից 06.09.2021թ.-ին ներկայացված բողոքի վերաբերյալ ներկայացնել անհրաժեշտ բոլոր փաստաթղթերի պատճեններն ու Պատվիրատուի գրավոր կարծիքը:

Պատվիրատուն ստանալով գրավոր դիրքորոշում հայտնելու վերաբերյալ գրությունը, ինչպես նաև ծանուցված լինելով նիստերի տեղի, օրվա և ժամի մասին, չի ներկայացել հրավիրված նիստերին:

Պատվիրատուն 09.09.2021թ.-ին թիվ Ե/40/2385-21 գրությամբ ներկայացված դիրքորոշմամբ հայտնել է հետևյալը.

««Քլինինգ Հաուս» ՍՊԸ-ի բողոքի քննության նպատակով ներկայացնում եմ «ՀԱԷԿ» ՓԲԸ-ի գրավոր դիրքորոշումը և բոլոր անհրաժեշտ փաստաթղթերի պատճենները: ՀԱԷԿ-ի N 2 էներգաբլոկի շահագործման ժամկետի երկարացման շրջանակներում Հայկական ԱԷԿ-ի թիվ 2 էներգաբլոկի ռեակտորային բաժանմունքի պատասխանատու սպառիչների հովացման համակարգերի (ՊՍՀՀ) I և II անցուղիների համար խողովակաշարերի և փականների մատակարարման նպատակով 2021թ. հուլիսի 23-ին հայտարարվել է «ՀԱԷԿ-ԲՄԱՊՁԲ-16/21» ծածկագրով գնման ընթացակարգ (այսուհետ՝ Ընթացակարգ):

«Քլինինգ Հաուս» ՍՊԸ-ի կողմից ս.թ. օգոստոսի 26-ին ստացվել է պարզաբանման հարցում, ինչին ի պատասխան «Գնումների մասին» ՀՀ Օրենքով (այսուհետ՝ Օրենք) սահմանված կարգով և ժամկետներում (ս.թ. օգոստոսի 27-ին) Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի կողմից տրամադրվել է պարզաբանում և հիմք ընդունելով պարզաբանման էությունը հրավերում փոփոխություն չի կատարվել:

Բողոքի պահանջը, այն է՝ պարտավորեցնել «Հայկական ատոմային էլեկտրակայան» ՓԲԸ-ի կարիքների համար հայտարարված «ՀԱԷԿ-ԲՄԱՊՁԲ-16/21» ծածկագրով բաց մրցույթի գնահատող հանձնաժողովին՝ Հրավերի 1-ին չափաբաժնի տեխնիկական բնութագրում կատարել փոփոխություն, անտրամաբանական է և հնարավոր չէ կատարել, քանի որ «Գնումների մասին» ՀՀ Օրենքի (այսուհետ՝ Օրենք) 29-րդ հոդվածի 4-րդ մասի համաձայն հայտերի ներկայացման վերջնաժամկետը լրանալուց առնվազն հինգ օրացուցային օր առաջ հրավերում կարող են կատարվել փոփոխություններ, իսկ Ընթացակարգի հայտերի ներկայացման վերջնաժամկետ է սահմանված ս.թ. սեպտեմբերի 9- ի ժամը 11:00-ն:

Բողոքի պահանջը կարծում եմ անհիմն է և ենթակա է մերժման, քանի որ հրավերով սահմանված պահանջները և գնահատող հանձնաժողովի կատարած գործողությունները համապատասխանում են ՀՀ օրենսդրությանը:»:

Պատվիրատուն 16.09.2021թ.-ին թիվ Ե/40/2472-21 գրությամբ ներկայացված դիրքորոշմամբ հայտնել է հետևյալը.

«ԳԲՔ-ԼՕ-2021/72 ծածկագրով բողոքի (այսուհետ՝ Բողոք) արդյունավետ քննության և օբյեկտիվ որոշում կայացնելու նպատակով Ձեզ ենք ներկայացնում մի շարք հանգամանքներ:

Հայտնում ենք, որ առցանց հետևելով Բողոքի քննության նպատակով 2021թ. սեպտեմբերի 15-ին կազմակերպված նիստին և լսելով «Քլինինգ Հաուս» ՍՊԸ-ի կողմից արված հայտարարությունն այն մասին, որ Հայկական ԱԷԿ-ի թիվ 2 էներգաբլոկի ռեակտորային բաժանմունքի պատասխանատու սպառիչների հովացման համակարգերի (ՊՍՀՀ) I և II անցուղիների համար խողովակաշարերի և փականների մատակարարման նպատակով հայտարարված «ՀԱԷԿ-ԲՄԱՊՁԲ-16/21» ծածկագրով գնման ընթացակարգին (այսուհետ՝ Ընթացակարգ) մասնակցության հայտ ոչ մի մասնակից չի ներկայացրել՝ չի համապատասխանում իրականությանը: Ս.թ. սեպտեմբերի 9-ին ժամը 11:00-ին էլեկտրոնային գնումների Armeps (www.armeps.am) համակարգի (այսուհետ՝ Համակարգ) միջոցով Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի բացող անդամների կողմից իրականացվել է հայտերի բացում: Ընթացակարգին մասնակցության հայտ է ներկայացրել թվով 7 մասնակից:

Միևնույն ժամանակ տեղեկացնում ենք, որ նախկինում կազմակերպված գնման ընթացակարգերին ևս մասնակիցներ եղել են, սակայն պայմանագիր չի կնքվել ոչ թե այն պատճառով, որ տեխնիկական բնութագրում առկա է խնդիր, այլ, առաջին անգամ գնման ընթացակարգը չկայացած է հայտարարվել բարձր գնային առաջարկի պատճառով, իսկ երկրորդի դեպքում ընտրված մասնակցի կողմից պայմանագիրը չի ներկայացվել:

Ընթացակարգի շրջանակներում հրավերի պարզաբանման վերջին պահանջը ներկայացվել է «Քլինինգ Հաուս» ՍՊԸ-ի կողմից ս.թ. օգոստոսի 26-ին, որին ի պատասխան ս.թ. օգոստոսի 27-ին տրամադրվել է հստակ պարզաբանում: «Գնումների մասին» ՀՀ Օրենքով (այսուհետ՝ Օրենք) սահմանված կարգով և ժամկետներով, ինչպես նաև Համակարգով հրավերի պարզաբանման պահանջի ներկայացման ժամկետ սահմանված է եղել մինչև ս.թ. սեպտեմբերի 4-ի ժամը 11:00-ն ներառյալ: Ձեր ուշադրությունն ենք ուզում

ներկայացնել այն հանգամանքին, որ մինչև փվյալ ժամկետի ավարտը որևէ պարզաբանման պահանջ այլևս չի ներկայացվել:

Ընթացակարգը կազմակերպվել է ՀԱԷԿ-ի Ж2 էներգաբլոկի շահագործման ժամկետի երկարացման շրջանակներում և ձեռքբերվող ապրանքները օգտագործվելու են 2022թ. իրականացվելիք պլանային նախազգուշական վերանորոգումների ընթացքում: Գնման առարկաների խիստ անհրաժեշտությունից ելնելով, հայտնում ենք, որ ՊՆՎ 2022-ի համար նախատեսված աշխատանքների ժամկետները ենթարկվել են փոփոխության և պլանավորվել են կատարվել 60 օրում նախկին 45 օրվա փոխարեն:

Ելնելով վերոգրյալից, հայտնում ենք, որ «Քլինինգ Հաուս» ՍՊԸ-ի կողմից բողոքարկման նիստի ընթացքում ներկայացված նոր պահանջը, այն է՝ պարտավորեցնել Ընթացակարգի գնահատող հանձնաժողովին Ընթացակարգը №1 չափաբաժնով հայտարարել չկայացած, ամբողջությամբ անհիմն է և ենթակա է մերժման:»:

4. <u>ԳԲՔԱ-LO-2021/72 բողոքի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը.</u>

Սույն գործի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերի համաձայն՝

i. «Հայկական ատոմային էլեկտրակայան» ՓԲԸ-ի կողմից Հայկական ԱԷԿ-ի թիվ 2 էներգաբլոկի ռեակտորային բաժանմունքի պատասխանատու սպառիչների հովացման համակարգերի (ՊՍՀՀ) I և II անցուղիների համար խողովակաշարերի և փականների ձեռքբերման նպատակով 23.07.2021թ.-ին հայտարարվել է «ՀԱԷԿ-ԲՄԱՊՁԲ-16/21» ծածկագրով բաց մրցույթ (այսուհետ նաև՝ Ընթացակարգ կամ Մրցույթ):

ii. Ընթացակարգի հրավերի հավելված 6-ով՝ պետության կարիքների համար ապրանքի մատակարարման պայմանագրի հավելված 1-ով՝ տեխնիկական բնութագիր - գնման ժամանակացույցով (այսուհետ նաև՝ Հավելված 1) 1-ին չափաբաժնի համար՝ ապրանքի անվանումը սահմանվել է՝ «Հայկական ԱԷԿ-ի թիվ 2 էներգաբլոկի ռեակտորային բաժանմունքի պատասխանատու սպառիչների հովացման համակարգերի (ՊՍՀՀ) I և II անցուղիների համար խողովակաշարերի մատակարարում»: Վերջինիս տեխնիկական բնութագիրը սահմանվել է՝ ««Հայկական ԱԷԿ-ի թիվ 2 էներգաբլոկի ռեակտորային բաժանմունքի պատասխանատու սպառիչների հովացման համակարգերի (ՊՍՀՀ) I և II անցուղիների համար խողովակաշարերի մատակարարում»: Ապրանքները պետք է ձեռք

բերվեն համաձայն կից ներկայացվող թիվ 357 «Տեխնիկական պահանջի»՝ հաստատված 17.06.2020 թվականին «ՀԱԷԿ» ՓԲԸ-ի ԳՃ-ի կողմից:

iii. «ՀԱԷԿ» ՓԲԸ-ի ԳՃ-ի կողմից 17.06.2020թ.-ին հաստատված թիվ 357 «Տեխնիկական պահանջի» համաձայն՝ սեյսմակայունությունը պետք է հաստատվի ՌԴ NP-031-01 «Սեյսմակայուն ատոմակայանների նախագծման չափորոշիչներ» պահանջներին համապատասխան, և համապատասխանաբար միջազգային ընդունված ՄԷԿ, ISO ստանդարտների:

vi. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի (այսուհետ նաև՝ Հանձնաժողով) 27.08.2021թ.-ի նիստի թիվ 7 արձանագրությամբ հաստատված հրավերի պարզաբանման մասին հայտարարության համաձայն՝ «ՀԱԷԿ» ՓԲԸ-ի կարիքների համար Հայկական ԱԷԿ-ի թիվ 2 էներգաբլոկի ռեակտորային բաժանմունքի պատասխանատու սպառիչների հովացման համակարգերի (ՊՍՀՀ) I և II անցուղիների համար խողովակաշարերի և փականների ձեռքբերման նպատակով կազմակերպված «ՀԱԷԿ-ԲՄԱՊՁԲ-16/21» ծածկագրով գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովը ստորև ներկայացնում է նույն ծածկագրով հրավերի վերաբերյալ 2021թ.-ի օգոստոսի 26-ին ստացված հարցադրումը և դրա վերաբերյալ 2021թ. օգոստոսի 27-ին տրամադրված պարզաբանումները՝

Հարցադրում N 1. Ձեր կողմից հայտարարված ՀԱԷԿ-ԲՄԱՊՁԲ-16/21 ծածկագրով գնման ընթացակարգի 1-ին չափաբաժանով նախատեսվել է «Հայկական ԱԷԿ-ի թիվ 2 էներգաբլոկի ռեակտորային բաժանմունքի պատասխանատու սպառիչների հովացման համակարգերի (ՊՍՀՀ) I և II անցուղիների համար խողովակաշարերի մատակարարում»:

Վերը նշված չափաբաժնի 4.4 ենթաբաժնի լրակազմությանը ներկայացվող պահանջներով սահմանվել է հետևյալը, որ՝

Համաձայն НП-031-01 սեյսմակայուն պահանջներ.

Սեյսմակայունությունը պետք է հաստատվի ՌԴ NP-031-01 «Սեյսմակայուն ատոմակայանների նախագծման չափորոշիչներ» պահանջներին համապատասխան, և համապատասխանաբար միջազգային ընդունված ՄԷԿ, ISO ստանդարտների:

Ելնելով վերոգրյալից, խնդրում ենք պարզաբանել՝

Խողովակների ձեռքբերման համար որևէ արտադրող ընկերություն, խողովակների համար չի տրամադրում սեյսմակայուն պահանջներ և հետևաբար Հրավերի տեխնիկական-բնութագրում այսպիսի պահանջի առկայությունը ստեղծում է արհեստական խոչընդոտ մասնակիցների քանակի ընդլայնման և ընդհանրապես մասնակցության հայտ ներկայացնելու համար:

Ոստի խնդրում ենք՝ Հրավերի տեխնիկական-բնութագրում կատարել փոփոխություն, այն է՝ հանել վերը նշված չափաբաժնի համար սահմանված 4.4 ենթաբաժնի սեյսմակայուն պահանջները, քանի որ խողովակների համար այդպիսի պահանջի առկայությունը ոչ իրավաչափ է:

Պարզաբանում N 1. Մատակարարվող արտադրանքի համապատասխանության հավաստումը ՀՊ-031-01-ին արտադրողի (մատակարարի) գործարանից չի պահանջվում: Խողովակաշարերի մասեր արտադրող գործարանը պետք է կատարի ԳOUS/OUS/ՏՈՒ տիպի պահանջները:

Հարցադրում N 2. Խնդրում ենք պարզաբանել ևս մեկ հարցի, այն է՝ ՀԱԷԿ-ԲՄԱՊՁԲ-16/21 ծածկագրով գնման ընթացակարգի 1-ին չափաբաժանի շրջանակներում ընտրված մասնակից ճանաչված մասնակիցը միայն պայմանագրի շրջանակներում իրականացնելու է խողովակների մատակարորում, թե մատակարարումից բացի կատարելու է նաև այդ խողովակների տեղադրման աշխատանքները:

Պարզաբանում N 2. ՏԱ-ի շրջանակներում նախատեսված է միայն մատակարարում:

5. <u>Բողոքներ քննող անձի հիմնավորումները և եզրահանգումը</u>.

Բողոքներ քննող անձը լրիվ, օբյեկտիվ և բազմակողմանի հետազոտելով և գնահատելով սույն գործում առկա ապացույցները, և համադրելով դրանք գործով պարզված փաստական հանգամանքների հետ, հանգում է այն եզրակցությանը, որ «Քլինինգ Հաուս» ՍՊԸ-ի կողմից 06.09.2021թ.-ին ներկայացված բողոքն անհիմն է և ենթակա մերժման ամբողջությամբ, հետևյալ պատճառաբանությամբ.

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (այսուհետ նաև՝ Օրենք) 3-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին և 2-րդ կետերի համաձայն՝ գնումների գործընթացը հիմնվում է հետևյալ սկզբունքների վրա.

1) գնման գործընթացի միասնական կանոններով մրցակցային, թափանցիկ, համաչափ, հրապարակային և ոչ խտրական հիմունքներով կազմակերպում.

2) պայմանագրի կնքման նպատակով մասնակիցների շրջանակի ընդլայնում և նրանց միջև մրցակցության խրախուսում:

Օրենքի 7-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ ցանկացած անձ, անկախ նրա օտարերկրյա ֆիզիկական անձ, կազմակերպություն կամ քաղաքացիություն չունեցող անձ լինելու հանգամանքից, ունի գնման գործընթացին մասնակցելու հավասար իրավունք:

Վերոնշյալ իրավական նորմերի վերլուծության արդյունքում, Բողոքներ քննող անձը, փաստում է, որ գնումների օրենսդրությունը, հիմնվելով գնման գործընթացի մրցակցային, թափանցիկ, համաչափ, հրապարակային, ոչ խտրական, գնման գործընթացին մասնակցելու իրավահավասարության սկզբունքների վրա, նպատակ է հետապնդում ապահովելու գնումների գործընթացում հատուցման դիմաց պատվիրատուին վերապահված լիազորությունների կատարման համար անհրաժեշտ՝ կարիքին համապատասխան ապրանքների, աշխատանքների և ծառայությունների ձեռքբերումը՝ համարժեք հատուցմամբ, և որ ամենակարևորն է՝ գնումների գործընթացի տնտեսող, արդյունավետ և օգտավետ իրականացման ապահովումը:

Ինչպես նաև, Բողոքներ քննող անձը հարկ է համարում հավելել, որ վերոնշյալ սկզբունքների ապահովումն ու իրականացումը գնումների օրենսդրության շրջանակներում իրացնելու համար, անհրաժեշտ պայման է նաև ցանկացած անձի՝ գնման գործընթացին մասնակցելու հավասար իրավունք ունենալու սկզբունքը՝ անկախ նրա օտարերկրյա ֆիզիկական անձ, կազմակերպություն կամ քաղաքացիություն չունեցող անձ լինելու հանգամանքից:

Օրենքի 13-րդ հոդվածի համաձայն՝

1. Գնման առարկայի բնութագրերը պետք է ամբողջությամբ և հստակ նկարագրեն ձեռք բերվող ապրանքի, աշխատանքի կամ ծառայության հատկանիշները, դրանց ձեռքբերման և վճարման պայմանները՝ բացառելով տարակերպ մեկնաբանությունը: Գնման առարկայի բնութագրերը, որոնք ներառում են նաև պայմանագրի գինը, ընդգրկվում են պայմանագրում:

2. Գնման առարկայի բնութագրերը՝

1) պետք է մրցակցության հավասար պայմաններ ապահովեն հնարավոր մասնակիցների համար.

2) չպետք է հանգեցնեն գնումների գործընթացում մրցակցության համար չհիմնավորված խոչընդոտների առաջացմանը.

3) պետք է լինեն օբյեկտիվորեն հիմնավորված և համարժեք լինեն այն կարիքին, որի բավարարման նպատակով կատարվում է տվյալ գնումը.

4) ներառում են գնման առարկայի մասնագրի, տեխնիկական տվյալների, իսկ աշխատանքների դեպքում՝ նաև աշխատանքների ծավալաթերթի, ժամանակացույցի և այլ ոչ գնային պայմանների ամբողջական և համարժեք նկարագրությունը:

3. Ելնելով գնման առարկայի առանձնահատկությունից՝ դրանց հատկանիշները հնարավորինս ներառում են ձեռք բերվող ապրանքի, աշխատանքի կամ ծառայության որակին, ստանդարտին, անվտանգությանը, պայմանական նշաններին, տերմինաբանությանը, փաթեթավորմանը, բեռնաթափմանը, չափին, նախագծերին, ինչպես նաև գնման առարկայի այլ հատկանիշներին վերաբերող պայմանների հստակ նկարագրությունը՝ հիմնված միջազգային ստանդարտների և Հայաստանի Հանրապետությունում գործող նորմատիվատեխնիկական փաստաթղթերի, ստանդարտների, իսկ դրանց բացակայության դեպքում՝ ժամանակավոր տեխնիկական պայմանների վրա:

4. Գնման առարկայի հատկանիշները կարող են սահմանվել նաև որպես կատարողականի կամ գործառութային (ֆունկցիոնալ) նկարագրեր, որոնք պետք է ներկայացվեն բավարար ճշտությամբ՝ հնարավորություն տալով մասնակիցներին և պատվիրատուին ճշգրիտ ընկալել պայմանագրի առարկան:

5. Գնման առարկայի հատկանիշները չպետք է պահանջ կամ հղում պարունակեն որևէ առևտրային նշանի, ֆիրմային անվանմանը, արտոնագրին, էսքիզին կամ մոդելին, ծագման երկրին կամ կոնկրետ աղբյուրին կամ արտադրողին, բացառությամբ այն դեպքերի, երբ անհնար է գնման առարկայի բնութագրումն առանց դրանց: Հղումներ օգտագործելու դեպքում հատկանիշների բնութագիրը պետք է պարունակի «կամ համարժեք» բառերը:

ՀՀ կառավարության 04.05.2017թ.-ի թիվ 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի (այսուհետ նաև՝ Կարգ) 21-րդ կետի 1-ին ենթակետի «ա» պարբերության համաձայն՝ … կազմում և հաստատում է գնման հայտը, որը ներառում է գնման առարկայի բնութագրերը: Ապրանքների գնման դեպքում նշվում է նաև մասնակցի կողմից առաջարկվող ապրանքային նշանի, ֆիրմային անվանման, մակնիշի և արտադրողի վերաբերյալ տեղեկատվության ներկայացման անհրաժեշտությունը, իսկ պայմանագրի կատարման փուլում ապրանքն արտադրողից կամ վերջինիս ներկայացուցչից երաշխիքային նամակի կամ համապատասխանության սերտիֆիկատի ներկայացման անհրաժեշտությունը, եթե դրանք կիրառելի են տվյալ ապրանքի համար: Ընդ որում, պայմանագրի կատարման փուլում այն կնքած մասնակցից ծագման երկրի սերտիֆիկատ չի պահանջվում:

Կարգի 22-րդ կետի համաձայն՝ գնման առարկայի բնութագրերը և մասնակիցների որակավորման հատկանիշների գնահատմանը ներկայացվող չափանիշները սահմանելիս

պետք է հաշվի առնել, որ դրանց պետք է բավարարեն մեկից ավելի հնարավոր մասնակիցներ...:

Բողոքներ քննող անձն արձանագրում է, որ Ընթացակարգի հրավերի թիվ 1 հավելվածով՝ տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցով սահմանված ցանկացած պահանջ պետք է ապահովի մրցակցության հավասար պայմաններ հնարավոր մասնակիցների համար, օբյեկտիվորեն հիմնավորված և համարժեք լինի այն կարիքին, որի բավարարման նպատակով կատարվում է տվյալ գնումը:

Տեխնիկական բնութագրով սահմանված այն չափորոշիչների մասով, որոնք պարունակում են հղում ապրանքային նշանին, սահմանված պետք է լինի «կամ համարժեք» արտահայտությունը:

Բողոքներ քննող անձը փաստում է, որ գնումների օրենսդրությունը, հիմնվելով գնման գործընթացի մրցակցային, թափանցիկ, համաչափ, հրապարակային, ոչ խտրական, գնման գործընթացին մասնակցելու իրավահավասարության սկզբունքների վրա, նպատակ է հետապնդում ապահովելու գնումների գործընթացում հատուցման դիմաց պատվիրատուին վերապահված լիազորությունների կատարման համար անհրաժեշտ՝ կարիքին համապատասխան ապրանքների, աշխատանքների և ծառայությունների ձեռքբերումը՝ համարժեք հատուցմամբ, և որ ամենակարևորն է՝ գնումների գործընթացի տնտեսող, արդյունավետ և օգտավետ իրականացման ապահովումը:

Ինչպես նաև, Բողոքներ քննող անձը հարկ է համարում հավելել, որ վերոնշյալ սկզբունքների ապահովումն ու իրականացումը գնումների օրենսդրության շրջանակներում իրացնելու համար, անհրաժեշտ պայման է նաև ցանկացած անձի՝ գնման գործընթացին մասնակցելու հավասար իրավունք ունենալու սկզբունքը՝ անկախ նրա օտարերկրյա ֆիզիկական անձ, կազմակերպություն կամ քաղաքացիություն չունեցող անձ լինելու հանգամանքից:

Բողոքներ քննող անձն փաստում է նաև, որ Ընթացակարգի գնման առարկայի բնութագրերն ամբողջությամբ և հստակ պետք է նկարագրեն ձեռքբերվող ապրանքի հատկանիշները՝ բացառելով տարակերպ մեկնաբանությունը, հնարավոր մասնակիցների համար պետք է ապահովեն մրցակցության հավասար պայմաններ, դրանով իսկ բացառելով գնումների գործընթացում մրցակցության համար չհիմնավորված խոչընդոտների առաջացումը: Ինչպես նաև բնութագիրն օբյեկտիվորեն հիմնավորված և համարժեք պետք է լինի այն կարիքին, որի բավարարման նպատակով հայտարարվել է Ընթացակարգը:

Սույն գործի փաստերի համաձայն՝ «Հայկական ատոմային էլեկտրակայան» ՓԲԸ-ի կողմից Հայկական ԱԷԿ-ի թիվ 2 էներգաբլոկի ռեակտորային բաժանմունքի պատասխանատու սպառիչների հովացման համակարգերի (ՊՍՀՀ) I և II անցուղիների համար խողովակաշարերի և փականների ձեռքբերման նպատակով 23.07.2021թ.-ին հայտարարված «ՀԱԷԿ-ԲՄԱՊՁԲ-16/21» ծածկագրով բաց մրցույթի հրավերի հավելված 6-ով՝ պետության կարիքների համար ապրանքի մատակարարման պայմանագրի հավելված 1-ով՝ տեխնիկական բնութագիր - գնման ժամանակացույցով 1-ին չափաբաժնի մասով ապրանքի անվանումը սահմանվել է՝ «Հայկական ԱԷԿ-ի թիվ 2 էներգաբլոկի ռեակտորային բաժանմունքի պատասխանատու սպառիչների հովացման համակարգերի (ՊՍՀՀ) I և II անցուղիների համար խողովակաշարերի մատակարարում»: Վերջինիս տեխնիկական բնութագիրը սահմանվել է՝ ««Հայկական ԱԷԿ-ի թիվ 2 էներգաբլոկի ռեակտորային բաժանմունքի պատասխանատու սպառիչների հովացման համակարգերի (ՊՍՀՀ) I և II անցուղիների համար խողովակաշարերի մատակարարում»: Ապրանքները պետք է ձեռք բերվեն համաձայն կից ներկայացվող թիվ 357 «Տեխնիկական պահանջի»՝ հաստատված 17.06.2020 թվականին «ՀԱԷԿ» ՓԲԸ-ի ԳՃ-ի կողմից:

«ՀԱԷԿ» ՓԲԸ-ի ԳՃ-ի կողմից 17.06.2020թ.-ին հաստատված թիվ 357 «Տեխնիկական պահանջի» համաձայն՝ սեյսմակայունությունը պետք է հաստատվի ՌԴ NP-031-01 «Սեյսմակայուն ատոմակայանների նախագծման չափորոշիչներ» պահանջներին համապատասխան, և համապատասխանաբար միջազգային ընդունված ՄԷԿ, ISO ստանդարտների:

Օրենքի 50-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ ենթակետի համաձայն՝ գնումների հետ կապված բողոքներ քննող անձին բողոքը ներկայացվում է գրավոր, ստորագրված, դրանում ներառելով՝ … բողոքի փաստացի և իրավական հիմքերը, ապացույցները:

Վկայակոչված հոդվածի վերլուծությունից հետևում է, որ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձը բողոքի քննությունը հարուցում և իրականացնում է միմիայն ներկայացված բողոքի հիման վրա և ենթակա է քննության միայն դրա սահմաններում: Ընդ որում, բողոք ներկայացնելով՝ շահագրգիռ անձն ինքնուրույն է որոշում իր բողոքի պահանջի շրջանակը, ինչը տնօրինչականության սկզբունքի դրսևորման արդյունք է, որն անձի՝ ՀՀ Սահմանադրությամբ և օրենքով նրան տրված հնարավորությունն է սեփական հայեցողությամբ տնօրինելու իր նյութական և դատավարական (ընթացակարգային) իրավունքները և դրանց պաշտպանության եղանակները:

Բողոքներ քննող անձը հարկ է համարում արձանագրել, որ բողոքի փաստացի և իրավական հիմքերը, ապացույցները ներկայացնելու պարտականությունը դրված լինելով բողոքաբերի վրա, վերջինս է հանդիսանում շահագրգիռ այն անձը, ով, ինքնուրույն որոշելով իր բողոքի պահանջի շրջանակը, պետք է բողոքի հետ միաժամանակ ներկայացնի փաստացի և իրավական հիմքերը, ապացույցները՝ որպես բողոքի բավարարմանն ուղղված էական նշանակություն ունեցող հիմքեր ու հիմնավորումներ: Ընդ որում, օրենսդիրը չի սահմանափակում բողոքի փաստացի և իրավական հիմքերը, ապացույցները ներկայացնել միայն բողոքի հետ միաժամանակ, այլև բողոքաբերը կարող է ու զրկված չէ լրացնելու/փոփոխելու/նվազեցնելու բողոքի փաստացի և իրավական հիմքերը, ապացույցները գործի քննության ընթացքում:

Զարգացնելով վերոգրյալ իրավական դիրքորոշումը՝ Բողոքներ քննող անձը հարկ է համարում փաստել նաև, որ փաստացի և իրավական հիմքեր, ապացույցներ ներկայացնելու պարտականությունը կրում է նաև բողոքի քննությանը ներգրավված յուրաքանչյուր անձ և վերջինիս իր առարկությունների հիմքում ընկած փաստական հանգամանքները, որոնք ուղղված են բողոքով վկայակոչված փաստերի հերքմանը, պետք է նույնպես պարունակեն, ըստ էության, Օրենքի 50-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ ենթակետով սահմանված դրույթներով նախատեսված փաստացի և իրավական հիմքեր, ապացույցներ:

Վերոգրյալ իրավական կարգավորումների և վերլուծությունների արդյունքում՝ Բողոքներ քննող անձը հարկ է համարում փաստել, որ բոլոր այն դեպքերում, երբ բողոքը ներկայացրած անձը բողոքարկում է գնման առարկայի բնութագրերը, նախաորակավորման հայտարարության կամ հրավերի պահանջները, մասնավորապես՝ երբ բողոքի վեճի առարկան հանդիսանում է հրավերում առկա որևէ պայմանի՝ գնումների օրենսդրությանը հակասելու հանգամանքը, ապա այդ՝ բողոքով վկայակոչված փաստական հանգամանքի ժխտման ապացուցման բեռը պետք է կրի պատվիրատուն, քանի որ Կարգի 22-րդ կետի իմաստով գնման առարկայի բնութագրերը սահմանելիս պետք է հաշվի առնել, որ դրանց պետք է բավարարեն մեկից ավելի հնարավոր մասնակիցներ և արտադրողներ: Ուստի, նման դեպքերում, բողոքի քննության ընթացակարգին մասնակցող պատվիրատուն է պարտավոր ապացուցել իր՝ հրավերով սահմանված գնման առարկայի բնութագրերի պահանջների և բողոքի առարկությունների հիմքում դրված ու գործի լուծման համար նշանակություն ունեցող փաստերն ու գնումների մասին ՀՀ օրենսդրությանը համապատասխանելու հանգամանքը:

Ամբողջ վերոգրյալների ու սույն գործի փաստերի հիման վրա, ուսումնասիրելով Ընթացակարգի հրավերը, Հանձնաժողովի 27.08.2021թ.-ի նիստի թիվ 7 արձանագրությամբ հաստատված հրավերի պարզաբանման մասին հայտարարությունը, ինչպես նաև Բողոքի հանգամանքները՝ Բողոքներ քննող անձն արձանագրում է, որ տվյալ դեպքում, Պատվիրատուն մրցույթի 1-ին չափաբաժնի մասով Բողոքներ քննող անձին ներկայացրել է վերաբերելի ապացույց առ այն, որ վերջինիս կողմից թույլ չի տրվել Օրենքի 13-րդ հոդվածով սահմանված դրույթների խախտում՝ հնարավոր մասնակիցների մրցակցության հավասար պայմանների խոչընդոտման առումով, և որ «ՀԱԷԿ-ԲՄԱՊՁԲ-16/21» ծածկագրով բաց մրցույթի Հավելված 1-ով նախատեսված՝ տեխնիկական բնութագիրը կազմված է և համապատասխանում է Օրենքի 13-րդ հոդվածի և Կարգի 22-րդ կետի դրույթներին, սահմանված տեխնիկական բնութագրում առկա չափորոշիչները չեն խոչընդոտում հնարավոր մասնակիցների մրցակցության հավասար պայմաններ ունենալու իրավունքը, ուստի մրցույթի տեխնիկական բնութագրերը բխում են Օրենքի 13-րդ հոդվածով և Կարգի 22-րդ կետով սահմանված պահանջներից, ըստ այդմ՝ ենթակա չեն փոփոխման:

Անդրադառնալով Ընկերության կողմից 25.09.2021թ.-ին ի լրումն բողոքի ներկայացրած փաստական հանգամանքներին ու կից փաստաթղթերին՝ Բողոքներ քննող անձը հարկ է համարում փաստել, որ Կարգի 21-րդ կետի 1-ին ենթակետի «ա» պարբերությամբ հստակ սահմանվել է, որ ապրանքների գնման դեպքում նշվում է նաև մասնակցի կողմից առաջարկվող ապրանքային նշանի, ֆիրմային անվանման, մակնիշի և արտադրողի վերաբերյալ տեղեկատվության ներկայացման անհրաժեշտությունը, իսկ պայմանագրի կատարման փուլում ապրանքն արտադրողից կամ վերջինիս ներկայացուցչից երաշխիքային նամակի կամ համապատասխանության սերտիֆիկատի ներկայացման անհրաժեշտությունը, եթե դրանք կիրառելի են տվյալ ապրանքի համար:

Ինչ վերաբերում է “ТМК-ИНОКС” ընկերության կողմից ներկայացված տեղեկատվությանը, ապա հարկ է նկատել, որ վերջինս գրությամբ փաստում է, որ “Сейсмобезопасность 2 класса НП-031-01. ДАННОЕ ТРЕБОВАНИЕ ООО ТМК-ИНОКС ВЫПОЛНИТЬ НЕ СМОЖЕТ. Этого у нас НЕТ.”: Այլ կերպ ասած՝ “ТМК-ИНОКС” ընկերությունը գրությամբ նշում է, որ չի կարող ապահովել Հրավերով սահմանված սեյսմակայության НП-031-01 տեխնիկական պահանջը, այն դեպքում, երբ Ընթացակարգին մասնակցության հայտ է ներկայացրել թվով 7 մասնակից, ըստ էության ապահովելով հրավերով պահանջվող չափանիշները:

Այսպիսով, վերոհիշյալ փաստական հանգամանքների և իրավական նորմերի լույսի ներքո, դրանց համակարգված վերլուծության արդյունքում՝ Բողոքներ քննող անձը հանգում է այն եզրակացության, որ «Քլինինգ Հաուս» ՍՊԸ-ի կողմից բողոքով բերված փաստերն ու հանգամանքները՝ հնարավոր մասնակիցների մրցակցության հավասար պայմանների խոչընդոտման առումով, հիմնավոր չեն, իսկ Ընթացակարգի պահանջները հիմնավոր են, ինչի արդյունքում Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի կողմից թույլ չի տրվել Օրենքի 13-րդ հոդվածով և Կարգի 22-րդ կետով սահմանված պահանջների խախտում, որպիսի պայմաններում «Հայկական ատոմային էլեկտրակայան» ՓԲԸ-ի կողմից Հայկական ԱԷԿ-ի թիվ 2 էներգաբլոկի ռեակտորային բաժանմունքի պատասխանատու սպառիչների հովացման համակարգերի (ՊՍՀՀ) I և II անցուղիների համար խողովակաշարերի և փականների ձեռքբերման նպատակով 23.07.2021թ.-ին հայտարարված «ՀԱԷԿ-ԲՄԱՊՁԲ-16/21» ծածկագրով բաց մրցույթի հրավերն ենթակա չէ փոփոխման:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 7-րդ մասով՝ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձը,

Ո Ր Ո Շ Ե Ց

«Քլինինգ Հաուս» ՍՊԸ-ի կողմից 06.09.2021թ.-ին ներկայացված ԳԲՔԱ-ԼՕ-2021/72 ծածկագրով բողոքը մերժել ամբողջությամբ՝ անհիմն լինելու պատճառաբանությամբ:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի ընդունած որոշումն ուժի մեջ է մտնում այն տեղեկագրում հրապարակելուն հաջորդող օրը:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի ընդունած որոշումն իրավապարտադիր է, որը կարող է փոփոխվել կամ վերացվել, այդ թվում՝ մասնակի, միայն դատարանի կողմից:

ՀՀ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ
ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ՝ **ԼԵՎՈՆ ՕՀԱՆՅԱՆ**